

ՀՈՐՄՈՒԶԻ ՆԵՂՈՒՑԻ ԱՅԼԸՆՏՐԱՎՆՔԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՇՈՒՐԶ

Բանալի բառեր՝ Հորմուզի նեղուց, Պարսից ծոց, անխաջրածնային ռեսուրսներ, այլընտրանքային ուղիներ, աշխարհաքաղաքականություն

Հորմուզի նեղուցը ջրային միակ ուղին է, որը կապում է Պարսից ծոցը արտաքին աշխարհի հետ: Նեղուցով են անցնում Պարսից ծոցի անխաջրածնային ռեսուրսները փոխադրող նավերն ու նավթային տանկերները: Նավթի և նավթամթերքի փոխադրումը նեղուցով 2019թ.-ին կազմել է համաշխարհային նավթի առևտրի 20%-ը, ծովային առևտրի 35%-ը:² Հորմուզի նեղուցով է անցնում նաև գազի համաշխարհային պաշարների 30%-ը, որի գերակշիռ մասը արտահանում է գազի համաշխարհային ամենամեծ պաշարներ ունեցող պետություններից Կատարը:³ Պետք է նշել նաև, որ նեղուցի՝ համաշխարհային անխաջրածնային ռեսուրսների տրանսպորտի մեջ կարևորագույն նշանակության հետ մեկտեղ այն կենսական նշանակություն ունի ծոցի երկրների համար բազմաթիվ ապրանքատեսակներ ներկրելու գործում:

Հորմուզի նեղուցի ջրերը ողողում են Իրանի, Օմանի (Մուսաննամ թերակղզի) և ԱՄԷ-ի ափերը: Հարկ ենք համարում ընդգծել, որ Իրանի վերահսկողության տակ են գտնվում նեղուցի մոտակայքում գտնվող մի շարք կղզիներ, որը հնարավորություն է տալիս Իրանին բավականին ազդեցություն ունենալ և լուրջ դերակատարություն ստանձնել Հորմուզի նեղուցի շահագործման անվտանգության հարցում: Ի հավելումն վերոհիշյալի՝ նավագնացության համար նախատեսված նեղուցի հյուսիսային մասը Իրանի ափերից մի քանի կիլոմետր հեռավորության վրա է գտնվում:⁴ Իրանա-ամերիկյան հարաբերությունների լարվածության թեժացման տարբեր փուլերում Իրանի բարձրաստիճան պաշտոնյաները հանդես են եկել նեղուցը փակելու ուղիղ և քողարկված սպառնալիքներով:

Իրանի կողմից պարբերաբար հնչող սպառնալից հայտարարությունները, ռազմական որևէ ընդհարման դեպքում

¹ ԵՊՀ Արաբագիտության ամբիոնի ասպիրանտ, էլ. փոստ՝ a.harutyunian@mfa.am

² The Strait of Hormuz is the world's most important oil transit chokepoint, <https://www.eia.gov/todayinenergy/detail.php?id=39932>,

³ Минэнерго США: альтернатив Ормузскому проливу почти нет, <http://www.profinance.ru/news/2019/06/25/bt8m-minenergo-ssha-alternativ-ormuzskomu-prolivu-pochti-net.html>,

⁴ Talmadge C., Closing time: Assessing the Iranian Threat to the Strait of Hormuz, 2008, International Security Journal, p. 86

աժխաջրածնային ռեսուրսների ծովային տրանսպորտի հնարավոր խցանումը, դրանից բխող համաշխարհային շուկայում նավթի ու գազի գների մեծ տատանումների վտանգը ստիպեցին Պարսից ծոցի երկրներին մտածել Հորմուզի նեղուցին այլընտրանք հաղիսացող երթուղիների կառուցման մասին, որն ունի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական մեծ նշանակություն թե՛ տարածաշրջանի երկրների և թե՛ միջազգային դերակատարների համար: Հողվածի նպատակն է քննության առնել Հորմուզի նեղուցը շրջանցող այլընտրանքային ուղիները տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում:

Նեղուցի այլընտրանքային ուղիները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ գործող, ոչ գործող և հնարավոր ուղիներ:

Գործող այլընտրանքային ուղիներ

Աբու Դաբիի ոչ մաքրագտված նավթային խողովակաշար

Գործող երթուղիներից է համարվում ԱՄԷ-ում գտնվող Աբու Դաբի-Ֆուլեյրա խողովակաշարային նավթային երթուղին, որը հայտնի է Աբու Դաբիի ոչ մաքրագտված նավթային խողովակաշար անունով: Այս խողովակաշարի միջոցով ԱՄԷ-ն իրականացնում է նավթով հարուստ Աբու Դաբի էմիրությունից նավթի արտահանումը՝ շրջանցելով Հորմուզի նեղուցը: Այսպիսով՝ ԱՄԷ-ն նվազեցրել է Հորմուզի նեղուցով անցնող նավարկությունը և ընդլայնել ԱՄԷ-ի արևելյան ծովափից արտահանման ծավալը: Ներկայումս այս խողովակաշարով անցնում է 1.5 միլիոն տակառ/օր նավթ, որը կազմում է ԱՄԷ-ի օրական ընդհանուր նավթի արտահանման կեսը:⁵ Խողովակաշարի տարողունակությունը կարող է հասնել մինչև 1.8 միլիոն տակառ/օր, որը կկազմի ԱՄԷ-ի նավթի օրական արտահանման 2/3-ը:⁶

Հատկանշական է, որ խողովակաշարի կառուցումը իրականացրել է չինական ընկերությունը, ինչը վկայում է Չինաստանի՝ էմիրաթական նավթի անվտանգ արտահանման շահագրգռվածության մասին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՄԷ-ն համարվում է Չինաստան նավթի մատակարարման երկրներից մեկը:⁷

Մատույան Արաբիայի Արևելք-Արևմուտք խողովակաշար

⁵ Abu Dhabi Crude Oil Pipeline Project, <https://www.uae-embassy.org/news-media/abu-dhabi-crude-oil-pipeline-project>,

⁶ Նույն տեղում

⁷ United Arab Emirates Crude Oil: Exports, <https://www.ceicdata.com/en/indicator/united-arab-emirates/crude-oil-exports>

Սաուդյան Արաբիայի Արևելք-Արևմուտք խողովակաշարը կապում է Սաուդյան Արաբիայի արևելյան (Շարկիյա) հատվածը⁸ Կարմիր ծովի հետ, որտեղ գտնվում է Յանբու նավահանգիստը: Այն բաղկացած է երկու հատվածից, որոնցից մեկը սկզբնապես օգտագործվում էր գազի փոխադրման համար, ապա փոխարինվեց նավթային երթուղու: Արևելք-Արևմուտք խողովակաշարի տարողունակությունը գնահատվում է 5միլիոն տակառ/օր, որը սաուդյան Արամկո ընկերությունը պլանավորում է հասցնել մինչև 7 միլիոն տակառ/օր 2023թ.-ին:⁹ Այն միտված է ամբողջապես ապահովելու Սաուդյան Արաբիայի նավթի արտահանումը Հորմուզի նեղուցի շուրջ ֆորսմաժորային իրավիճակների դեպքում: Արևելք-Արևմուտք խողովակաշարը մեծ կարևորություն ունի ոչ միայն Հորմուզի, այլ նաև Բաբ էլ-Մանդեբի նեղուցը շրջանցելու համար, քանի որ վերջինիս նավարկության անվտանգությունը նույնպես կարող է խաթարվել՝ հաշվի առնելով առափնյա երկրների ներքաղաքական իրավիճակը (Եմեն) և միմյանց միջև առկա տարածքային վեճերը (Չիբութի և Էրիթրեա):¹⁰

Քիրքուք-Չեյհան նավթային խողովակաշար

Քիրքուք-Չեյհան խողովակաշարը, որը հայտնի է նաև Իրաք-Թուրքիա ոչ մաքրագտված նավթի խողովակաշար, Իրաքի հյուսիսային շրջանում գտնվող նավթահորերից աղյուսահանվող նավթի արտահանման ուղին է դեպի Միջերկրական ծովում գտնվող թուրքական նավահանգիստ: Այն բաղկացած է երկու խողովակաշարերից և ունի 1.5 միլիոն տակառ/օր տարողունակություն:¹¹ 1990թ.-ից ի վեր Քիրքուք-Չեյհան խողովակաշարը պատերազմների, Իրաքի վրա սահմանված տնտեսական պատժամիջոցների և տարբեր խմբավորումների կողմից հարձակումների ենթարկվելու պատճառով կանոնավոր չի գործել: 2014թ.-ին Իսլամական պետության կողմից հարձակումների ենթարկվելուց և վերջինիս կողմից Իրաքի հյուսիսային մասում վերահսկողություն սահմանելուց հետո խողովակաշարի իրաքյան

⁸ Այստեղ են կենտրոնացած Սաուդյան Արաբիայի ածխաջրածնային ռեսուրսների հիմնական մասը:

⁹ FEATURE: Saudi crude keeps flowing to Red Sea as East-West Pipeline repairs continue, <https://www.spglobal.com/platts/en/market-insights/latest-news/shipping/122220-feature-saudi-crude-keeps-flowing-to-red-sea-as-east-west-pipeline-repairs-continue>

¹⁰ Մանրամասն տես՝ Հայկ Քոչարյան. «Բան Ալ-Մանդեբի նեղուցի նշանակությունը Երեք ծովերի համակարգում», ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Վերլուծական տեղեկագիր համար 9, Երևան, 2016թ.

¹¹ Country Analysis Brief: Iraq, U.S. Energy Information Administration, 2016, p. 7

հատվածը փակվեց: Այս պայմաններում Իրաքյան Քուրդիստանը կառուցեց առանձին խողովակաշար, որը անցնում էր իր վերահսկողության տակ գտնվող տարածքներով՝ այսպիսով ապահովելով նավթի անվտանգ փոխադրումը մինչև Քիրքուք-Չեյհան խողովակաշարի թուրքական հատված: 2018թ.-ի վերջին Իրաքյան Քուրդիստանը Քուրդիստան-Չեյհան խողովակաշարի տարողունակությունը հասցրեց 1 միլիոն տակառ/օրի:¹²

2020թ.-ի վերջին Քիրքուք-Չեյհան խողովակաշարով նավթի արտահանման ծավալը կազմել է 500 հազար տակառ/օր, որի զգալի հատվածը՝ Իրաքյան Քուրդիստանից:¹³ Կարևոր է նշել, որ այս ծավալը պայմանավորված է նաև այն պատճառով, որ Իրաքի հյուսիսային շրջանների նավթը հիմնականում ենթարկվում է վերամշակման:¹⁴ Հետևապես՝ Իրաքի նավթի արտահանման գլխավոր ճանապարհը շարունակում է մնալ Պարսից ծոցը, որտեղով Իրաքից արտահանվող նավթի ծավալները ռեկորդային էին 2018թ.-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ հասնելով 3.6 միլիոն տակառ/օրի:¹⁵ Վերջինս կապված է նաև Իրաքի նավթի արտահանման շուկայի հետ, որի գերակշիռ մասը գտնվում է Ասիայում:¹⁶

Զգործող ուղիներ. Համաարաբական խողովակաշար

Համաարաբական խողովակաշարը, որը ձգվում է Սաուդյան Արաբիայի ալ-Ղամմամ քաղաքից մինչև Լիբանանի Սիդոն քաղաք, սկսել է օգտագործվել 1950թ.-ից և համարվում էր այդ ժամանակվա նավթային ամենամեծ խողովակաշարը:¹⁷ Այն անցնում է Սաուդյան Արաբիայով, Հորդանանով, Սիրիայով և Լիբանանի տարածքներով: Խողովակաշարը կապում էր Պարսից ծոցը Միջերկրական ծովի հետ և համարվում էր ավելի էժան նավթային երթուղի դեպի Եվրոպա և ԱՄՆ:¹⁸ Այն կառուցվել

¹² KRG officials say Ceyhan pipeline resumes flows after being hit by terrorist attack, <https://www.spglobal.com/platts/en/market-insights/latest-news/oil/110520-krq-officials-say-ceyhan-pipeline-resumes-flows-after-being-hit-by-terrorist-attack>

¹³ Turkey seeks renewal of Kirkuk-Ceyhan pipeline: Ambassador Yildiz, <http://www.rudaw.net/english/middleeast/iraq/110120191>,

¹⁴ Iraq's Kirkuk oil exports to stay restricted, <https://www.reuters.com/article/us-iraq-oil/iraqs-kirkuk-oil-exports-to-stay-restricted-idUSKCN1OPOGN>,

¹⁵ Iraq Oil Exports From South Close To Record-High, <https://oilprice.com/Latest-Energy-News/World-News/Iraq-Oil-Exports-From-South-Close-To-Record-High.html>,

¹⁶ Iraq, Executive Summary, Overview, Energy Information, Administration, 2019, <https://www.eia.gov/beta/international/analysis.php?iso=IRQ>,

¹⁷ Սկզբնապես խողովակաշարի հզորությունը 300000 տակառ/օր էր, որը հասավ 500000 տակառ/օր

¹⁸ Trans-Arabian Pipeline, <https://www.encyclopedia.com/humanities/encyclopedias-almanacs-transcripts-and-maps/trans-arabian-pipeline>,

է ամերիկյան Արամկո ընկերության կողմից, որը այդ ժամանակ Սաուդյան Արաբիայի հետ միասին տնօրինում էր վերջինիս նավթային սեկտորը: Անցնելով չորս արաբական պետությունների միջով՝ խողովակաշարը պարբերաբար դադարել է օգտագործվել՝ կապված տարածաշրջանի ռազմաքաղաքական և աշխարհաքաղաքական իրադարձությունների հետ: Ի վերջո այն դադարել է օգտագործվել 1990թ.-ից ի վեր Հորդանանի՝ իրաքյան ագրեսիայի ժամանակ ցուցաբերած դիրքորոշման հետ:¹⁹

Սաուդյան Արաբիայում իրաքյան խողովակաշար

Սաուդյան Արաբիայում իրաքյան խողովակաշարը կառուցվել է 1980-ական թթ.-ին իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ: Այն միտված էր դիվերսիֆիկացնելու նավթի արտահանման ուղիները Պարսից ծոցում ընթացող տանկերների պատերազմի ժամանակ և ունի 1.65 միլիոն տակառ/օր տարողունակություն: 1990թ.-ի Քուվեյթի նկատմամբ իրաքյան ագրեսիայից հետո իրաքյան նավթը դադարել է փոխադրվել այս խողովակաշարով: 2001թ.-ին Սաուդյան Արաբիան սեփականաշնորհեց վերջինս Իրաքի պարտքերի փոխհատուցման դիմաց: Սաուդյան Արաբիան սկսեց օգտագործել այն որպես զագատար խողովակաշար՝ երկրի արևելյան հատվածից զազը արևմտյան հատվածում գտնվող էլեկտրակայաններ տեղափոխելու համար: 2012թ.-ին Իրանի կողմից Հորմուզի նեղուցը փակելու մասին արված հայտարարություններից հետո Սաուդյան Արաբիան փորձարկեց իրաքյան խողովակաշարը սաուդական ոչ մաքրագտված նավթի փոխադրման համար:²⁰ Վերջին ժամանակներում սաուդա-իրաքյան հարաբերությունների համեմատաբար բարելավման պայմաններում խոսվում է նաև իրաքյան խողովակաշարը Իրաքի կողմից վերագործարկելու հնարավորության մասին:²¹

Հնարավոր ուղիներ

Անդրադառնալով Հորմուզի նեղուցի այլնտրանքային գործող ուղիներին՝ կարող ենք նկատել, որ վերոհիշյալ ուղիները թե՛ հզորությամբ, թե՛ գործող տարողունակությամբ չեն բավարարում

¹⁹ Հորդանանը չմիացավ հակաիրաքյան կոալիցիային՝ ազատագրելու Քուվեյթի Պետությունը

²⁰ Middle East Economic Survey, "Iraq hopes for IPSA access with Saudi opening," (Volume 60, Issue 35), September 1, 2017.

²¹ Iraq wants to reopen old Saudi pipeline: Ex-minister,

<https://www.oilandgasmiddleeast.com/article-17679-iraq-wants-to-reopen-old-saudi-pipeline-ex-minister>,

Պարսից ծոցի ածխաջրածնային պաշարների արտահանման պահանջներին: Ուստի տարածաշրջանային պետությունները, ինչպես նաև միջազգային խաղացողները դիտարկում են մի քանի այլընտրանքային ուղիներ, որոնց ծրագրերի իրականացումը մեծ ազդեցություն կունենա Հորմուզի նեղուցի շուրջ տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումների վրա:

Սիրիա

Սիրիայի աշխարհագրական դիրքը նպաստավոր է Պարսից ծոցի ածխաջրածնային ռեսուրսների՝ Եվրոպա արտահանելու համատեքստում: Գտնվելով Պարսից ծոցի՝ ածխաջրածնային ռեսուրսներով հարուստ երկրների և Միջերկրական ծովի հարևանությամբ՝ Սիրիան կարող է դառնալ Եվրոպա ածխաջրածնային ռեսուրսների արտահանման կարևոր օղակ: Այս հանգամանքը կարևոր դեր է խաղացել նաև Սիրիայում 2011թ.-ին սկսված իրադարձություններին տարածաշրջանային և միջազգային պետությունների ներգրավման գործում: Այս ամենը կարող ենք տեսնել Սիրիայով անցնող գազային երկու նախագծերի դիտարկմամբ, որոնք պետք է անցնեն Սիրիայով: Խոսքը Իրան-Իրաք-Սիրիա-Լիբանան և Կատար-Թուրքիա խողովակաշարերի մասին է: Առաջինը համարվում է իրանական նախագիծ, որը նպատակ ունի գազ արտահանել ինչպես Իրաք, Սիրիա և Լիբանան, այնպես էլ դեպի եվրոպական երկրներ: 2011թ.-ին Սիրիայում սկսված քաղաքացիական պատերազմը, ինչպես նաև Իրանի դեմ կիրառված արևմտյան պատժամիջոցները խաթարեցին նախագծի իրագործումը:

Մյուս նախագիծը Կատարից գազի՝ Եվրոպա արտահանման ծրագիրն է, որը նախատեսվում էր Թուրքիայում միացնել Նաբուկկո խողովակաշարին:²² Կատար-Թուրքիա խողովակաշարի՝ Սիրիայով անցնելու գաղափարը, ըստ տարբեր աղբյուրների, մերժվել է Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի կողմից՝ հաշվի առնելով իր դաշնակից Ռուսաստանի շահերը, որը համարվում է ԵՄ-ի՝ ածխաջրածնային ռեսուրսներ մատակարարող գլխավոր պետությունը:²³ Այս հանգամանքը իր ազդեցությունն ունեցավ նաև Կատարի՝ Սիրիայի ընդդիմադիր խմբավորումներին քաղաքական, ֆինանսական և այլ օգնությունների տրամադրման վրա:

²² Նաբուկկո խողովակաշարով նախատեսվում էր Թուրքիայի միջոցով Իրաքից, Ադրբեջանից և Թուրքմենստանից գազ մատակարարել մինչև Ավստրիա:

²³ EU imports of energy products - recent developments, <https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/pdfscache/46126.pdf>,

Եմեն

2011թ.-ից Եմենում բռնկված քաղաքացիական պատերազմը Սաուդյան Արաբիայի համար ի թիվս այլ անվտանգային և աշխարհաքաղաքական ահռելի նշանակության՝ կարևոր դերակատարություն կարող է ունենալ նաև Ս. Արաբիայի ածխաջրածնային ռեսուրսների անխափան արտահանման գործում: Ամրապնդելով իր ներկայությունը Եմենում՝ Ս. Արաբիան մտադիր է կառուցել նավթային խողովակաշար, որը հնարավորություն կտա շրջանցելու Հորմուզի, ինչպես նաև Բաբ էլ-Մանդեբի նեղուցները և անմիջապես դուրս գալու Արաբական ծով: Հարկ է նշել, որ Եմենի տարածքով նավթային խողովակաշար կառուցելու ծրագիրը քննարկվել է նաև մինչև պատերազմի բռնկումը: Ըստ տարբեր աղբյուրների՝ խողովակաշարի անվտանգության ապահովումը Ս. Արաբիան ցանկանում էր իրականացնել իր անվտանգության ուժերի միջոցով, ինչին ընդդիմացել էր Եմենը՝ համարելով այն երկրի ինքնիշխանության խախտում:²⁴

Եմենում քաղաքացիական պատերազմի բռնկումը, Ս. Արաբիայի գործուն միջամտությունը պատերազմին կարող են նպաստավոր պայմաններ ստեղծել սաուդական պրոյեկտի իրականացման համար: Այս համատեքստում կարելի է դիտարկել նաև 2017թ. Ս. Արաբիայի կողմից ռազմական ներկայության մեծացումը Եմենի հարավ-արևելյան նահանգ ալ-Մահրայում: 2018թ. օգոստոսին տարբեր աղբյուրներում շրջանառվեց ալ-Մահրա նավահանգստում նավթային նավահանգիստ կառուցելու սաուդական մտադրության մասին: Հատկանշական է, որ նույն ժամանակահատվածում Ս. Արաբիան ալ-Մահրա նահանգում ի թիվս վերակառուցման այլ պրոյեկտների, հիշատակել է նաև Նիշտուն նավահանգստի ընդայման և բարելավման ծրագրի մասին:²⁵

Զննության առնելով Հորմուզի նեղուցը շրջանցող այլընտրանքային ուղիները՝ կարող ենք եզրակացնել հետևյալը.

- Հաշվի առնելով Հորմուզի նեղուցի կենսական նշանակությունը Պարսից ծոցի ածխաջրածնային ռեսուրսների արտահանման համար և նեղուցին գործող այլընտրանքային ուղիների ոչ բավարար լինելու հանգամանքը՝ այն կշարունակի պահպանել իր կարևոր հաղորդակցային

²⁴ Nishtun: From Yemeni Commercial Port to Military Barracks for Saudi Arabia (A Field Investigation from Inside the Port, <https://almawqaeapost.net/english-news/39700>)

²⁵ Saudi Reconstruction Program in Yemen Launches Eight New Projects in Al Mahra Governorate, <https://www.saudiembassy.net/news/saudi-reconstruction-program-yemen-launches-eight-new-projects-al-mahra-governorate?fbclid=IwAR2fAS1xOyhp31DAoKM33b1ff1Vtn1rovSjTSRfu133PI3-O7GZ5xonvrfU>

նշանակությունը համաշխարհային ածխաջրածնային ռեսուրսների առևտրի համատեքստում:

- Նեղուցի այլընտրանքային ուղիների ընդլայնումը ունի կարևորագույն աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական նշանակություն: Հորմուզի նեղուցի հաղորդակցային նշանակության նվազեցումը իր ազդեցությունն կունենա Պարսից ծոցում Իրանի դերակատարության վրա:

- Այլընտրանքային նոր ուղիների կառուցումը մի կողմից, մյուս կողմից դրանց իրագործման համար արհեստական խոչընդոտներ ստեղծելը կարևոր նշանակություն ունեն տարածաշրջանում տարբեր ուժային կենտրոնների քաղաքականության ձևավորման համար:

- Սիրիայում և Եմենում ընթացող աշխարհաքաղաքական զարգացումները կապված են նաև Պարսից ծոցից ածխաջրածնային ռեսուրսների արտահանման համար Հորմուզի նեղուցը շրջանցող պրոյեկտների իրականացման հնարավորության հետ, ինչը ավելի է սրում այդ երկրներում տարածաշրջանային ուժերի միջև պայքարը:

ALTERNATIVES TO THE STRAIT OF HORMUZ

Andranik Harutyunyan

(Summary)

The Strait of Hormuz plays a prominent role in international marine transportation of hydrocarbon resources. Given the ongoing tension between United States and Iran, the Iranian officials for years have threatened to close the Strait, which made regional powers to think about alternative ways to transfer the hydrocarbon resources. The paper examines the alternative routes to transfer the oil from the Persian Gulf by bypassing the Strait of Hormuz. The study also discusses new possible alternative routes to the Strait and its impact on the geopolitical situation in the region.

The study argues that the Strait of Hormuz will continue to play vital role taking into account the insufficient capability of alternative routes to the Strait. The ongoing conflicts in Yemen and Syria are connected with the perspective to launch new alternative routes through those countries, which exacerbates the competition between regional powers.